

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

Երկու հազար քսան թվականի փետրվարի քսան վեցին քաղաք Ալավերդի

Բնապահպանական հանրային դատարանը՝ Ն. Վարդանյան, Ռ.Զուլհալյան,
Լ.Գալստյան կազմով

Քարտուղարությամբ՝ Հայկ Գրիգորյանի

Դիմումատու՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
նախագահ՝ Օլեգ Դուլգարյանի

Պատասխանողի ներկայացուցիչներ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի
պետ՝ Ա.Դեմիրջյանի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի
Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ Կ.
Գալինյանի, «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի արտաքին կապերի գծով բաժնի պետ Գ.
Շահնազարյանի մասնակցությամբ

Դռնբաց դատական նիստում, քննելով «Նահատակի» պոչամբարի շարունակական
ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա»
բնապահպանական հանրային գործն՝ ըստ Օլեգ Դուլգարյանի դիմումի,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն շահագործում է Շամլուղի պղինձ-հրաքարային հանքավայրը,
որը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ Ախթալա համայնքի Շամլուղ բնակավայրի
վարչական տարածքում, Ախթալա գետի ավազանում: Ախթալայի հարստացուցիչ
ֆաբրիկան գտնվում է Ախթալա կայարանից 2 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-
արևմուտք: Կոմբինատի գործունեության ընթացքում Ախթալա համայնքում
ձևավորվել են 3 պոչամբարներ՝ «Նազիկ», «Պահեստի ձորի»/պահուստային/ և
«Նահատակ»: «Նահատակ» պոչամբարը՝ 3,2 մլն.իսմ նախագծային հզորությամբ և
13,7հա մակերեսով, որտեղ շարունակվում են կուտակվել Ախթալայի ԼՀԿ-ում
վերամշակվող պղնձի հումքի վերամշակման թափոնները, գտնվում է Մեծ Այրում և
Ճոճկան համայնքների միջև:
Պոչամբարը կառուցվել է խորհրդային տարիներին, սակայն կարճ ժամանակ անց
պոչամբարի շահագործումը դադարեցվել է:
2010 թվականից պոչամբարը վերաշահագործվել է: 2016թ. «Ախթալայի ԼՀԿ»-ն
ընդլայնել է պոչամբարի տարածքը՝ կառուցելով 8մ բարձրությամբ պատվար, սակայն

պոչամբարի ընդլայնումը շարունակվում է մինչև օրս /ըստ Ընկերության՝ նախատեսվում է պատվարը բարձրացնել ևս 1 մետրով/: Մեծ Այրում գյուղի բնակելի տները պոչամբարից գտնվում են 50-100 մետր հեռավորության վրա: 2017թ-ին «Ախթալայի ԼՀԿ»-ն ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացրել «Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» նախագիծը և ստացել ԲՓ 100 14.11.2017թ. փորձաքննական դրական եզրակացությունը, համաձայն որի, նախատեսվում էր, որ խտացված և ջրազրկված պոչերը պետք է տեղակայվեին մինչ այդ շահագործված բացահանքի արդյունահանված տարածքում և 2018 թ-ի հոկտեմբերից դադարեցվելու էր «Նահատակի» պոչամբարում կոմբինատի պոչանքների կուտակումը: Ի լրումն դրան, կոմբինատը 2018թ-ին ստացել է «Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինում մինչև 500,0 հազար տոննա/տարի արտադրողականությամբ աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» ԲՓ 77 17.09.2018թ. փորձաքննական դրական եզրակացությունը: Այդ եզրակացության մեջ ամրագրվել են հետևյալ պահանջները՝

1. Աշխատանքների իրականացման ընթացքում, ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերն ու պահանջները:
2. Գործունեության ընթացքում բացառել.
 - Պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ թթվազոյացման պոտենցիալ ունեցող լցակույտային ապարների օգտագործումը:
 - Չմաքրված ջրերի հեռացումը դեպի շրջակա միջավայր և բաց ջրավազաններ՝ մասնավորապես բոլոր արտադրական լցակույտերի տարածքից և ստորգետնյա հանքից հեռացվող թթվային ջրերը:
3. Պահպանել նախագծով նախատեսված ժամանակացույցը՝ մաքրման կայանի շինարարությունն ավարտել մինչև 01.09.2019թ., իսկ «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացումն ավարտել մինչև 01.03.2020թ.:
4. Ապահովել մաքրման կայանի աշխատանքի և պոչամբարի ռեկուլտիվացման նախագծային ցուցանիշները:
5. Պոչամբարի տարածքի ռեկուլտիվացիան՝ հիդրոցանքի մեթոդի կիրառմամբ, ոչ բավարար լինելու դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, և իրականացնել բուսականության վերականգնման այլընտրանքային եղանակ:
6. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ՝ ջրօգտագործման թույլտվություն և այլն:

7. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների՝ ջուր, օդ, հող և այլն, մոնիտորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար: Մոնիտորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
8. Շահագործման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադր) տարածքից հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումը, ջրհեռացումը և վտանգավոր թափոնների (պահեստավորում և տարածքից հեռացում) կառավարումն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
9. Ռեկուլտիվացիոն աշխատանքների ավարտից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է լցակույտերի տարածքի կամ տարածքների վերականգնման (ռեկուլտիվացիայի) ՇՄԱԳ հաշվետվությունը՝ կից նախագծային փաստաթղթերով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Սակայն մինչև օրս «Նահատակ» պոչամբարի, ինչպես նաև «Ախթալայի ԼՀԿ»-ին պատկանող չշահագործվող մյուս պոչամբարները չեն ռեկուլտիվացվել: «Նազիկի» պոչամբարի ռեկուլտիվացիան կատարվել է թերի, իսկ «Պահեստի ձորի» պահուստային պաշամբարը շահագործվում է մինչ այժմ: Բաց պոչամբարներից արտանետումներն ու արտահոսքերը շարունակաբար աղտոտում են Լոռու մարզի Ախթալա, Շամլուղ քաղաքները, Բենդիկ, Վերին Ախթալա, Ճոճկան, Մեծ Այրում գյուղերը, Տավուշի մարզի Այրում քաղաքը, Արճիս, Դեղձավան, Դեբեդավան, Լճկաձոր, Հաղթանակ, Պտղավան, Բերդավան, Ջորական գյուղերը:

«Նահատակ» պոչամբարի տարողունակությունը 2017թ-ի դրությամբ սպառված էր: «Ախթալայի ԼՀԿ»-ն շարունակում է այս պոչամբարի շահագործումը և Ընկերության նախագծով փաստվող պոչամբարի շահագործման շարունակման դեպքում Ճոճկան-Այրում ավտոճանապարհի տեղափոխման, գոյություն ունեցող ջրամբարի պատվարի ներքնի շեպի և պատնեշի միջև կուտակվող ջրերի հեռացման, ինչպես նաև պատնեշի կայունության գնահատման, պոչատար խողովակաշարի խցանումների հետևանքով պոչերի արտահոսքերի հարցերը մնացել են առկախված:

Երկու նախագծերի բնապահպանական փորձաքննական եզրակացություններում չի ներկայացվել որևէ վիճակագրություն՝ կապված տարածաշրջանի ելակետային առողջապահական ցուցանիշների հետ և չեն գնահատվել Ընկերության գործունեությամբ պայմանավորված ազդակիր բնակավայրերի բնակչության առողջության վիճակի փոփոխության ռիսկերը: Հաշվարկվել է միայն մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը, որն իր մեջ չի ներառել մթնոլորտային օդի, ջրի, հողի, գյուղմթերքի աղտոտվածությունը ծանր մետաղներով և տոքսիկ տարրերով, որոնց սկզբնաղբյուրը Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի համալիրն է:

2. Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը

Դիմումատու՝ Օ.Դուլգարյանը, դիմելով Դատարան, ներկայացրել է հետևյալ փաստերը և հիմնավորումները.

ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում և Ճոճկան համայնքների միջև է գտնվում «Նահատակ» պոչամբարը, որտեղ կուտակվում են ՀՀ Լոռու մարզի Ախթալայի ԼՀԿ-ում վերամշակվող պղնձի հումքի թափոնները: Պոչամբարն գտնվում է Մեծ Այրում գյուղին կից, և բնակելի տները պոչամբարից գտնվում են 50-100 մետր հեռավորության վրա: Պոչամբարը կառուցվել է դեռևս խորհրդային տարիներին, սակայն կարճ ժամանակ անց այն փակել են տեղի ազգաբնակչության բողոքներից հետո: Մոտ 2010 թվականից պոչամբարը սկսեցին շահագործել և այնտեղ կուտակել թափոնները, քանի որ մյուս պոչամբարներն արդեն լցված էին, ու դադարեցին շահագործել, սակայն մինչև օրս նրանց ռեկուլտիվացիան կամ չի կատարվել, կամ կատարվել է թերի, և հին պոչամբարների թափոնները լցվում են շրջակա միջավայր: Սկսած 2012-2013 թվականից Մեծ Այրում գյուղի բնակիչներն արդեն սկսեցին բողոքել պոչամբարի վնասակար ազդեցությունից, սակայն դրա վրա ոչ ոք ուշադրություն չի դարձրել:

2015 թվականին պոչամբարին կից ընկերությունն ու իշխանությունը ցանկանում էին կառուցել երկրորդ պոչամբարը, սակայն «SOS Մեծ Այրում» նախաձեռնությունն իրականացրեց ազգային մակարդակի արշավ և չթույլատրեց պոչամբարի կառուցումը: 2013թ-ից արդեն սկսվեցին տարբեր տեսակի հետազոտություններ իրականացվել, որոնք ցույց էին տալիս տվյալ տարածքում ծանր մետաղներով աղտոտման բարձր կոնցետրացիան չափահաս բնակչության և երեխաների արյան մեջ, ինչպես նաև տեղի մրգերում:

Համայնքի բնակիչներն այդ տարիների ընթացքում չէին դադարում բողոքել իրենց առողջության վատթարացումից: Հիմնական աղտոտման պատճառը ոչ միայն այդ և մյուս պոչամբարների առկայությունն է, այլ նաև թափոնների շարունակական հոսքերը դեպի Դեբեդ գետ, որի ջրերով որոգում են իրենց այգիները մոտ երկու տասնյակ գյուղեր:

2018-2019 թվականներին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի և քիմիական անվտանգության հարցերով զբաղվող չեխական «ԱՐՆԻԿԱ» կազմակերպության համագործակցությամբ իրականացվել են հետազոտություններ, որոնք հիմնավորում են Մեծ Այրումում, Ախթալա համայնքի և Ալավերդի համայնքի մի շարք բնակավայրերում հանքարդյունաբերական աղտոտիչների առկայությունը և դրանց տարածումը հողերում, միրգ-բանջարեղենում և մարդու օրգանիզմում: Նմուշառումներ են կատարվել նաև Մեծ Այրում գյուղում բնակվող Դանիելյանների տնամերձ հողամասից և ընտանիքի անդամներից մազերից: Վերցված հողի, միրգ-բանջարեղենի նմուշառումները ցույց են տվել տարածաշրջանում ծանր մետաղների բարձր կոնցետրացիաներ, որոնք գերազանցում են ազգային և միջազգային ստանդարտները բազմաթիվ անգամներ, մասնավորապես, մեծ են մկնդեղի, կաղմիումի և պղնձի խտությունները: Ըստ չեխ բժիշկների՝ նմուշների վերլուծության արդյունքները հաստատում են այդ տարածքներում կոնցեզերոզեն և ոչ կոնցերոզեն հիվանդությունների բարձր ռիսկեր:

«Նահատակ» պոչամբարն արդեն մի քանի տարի է, որ սպառել է իր նախագծային ծավալը, և արդյունաբերական ընկերությունը շարունակաբար այն բարձրացնում է՝ կառուցելով դամբաներ: Այն արդեն բարձր է միջհամայնքային ճանապարհից և նաև վտանգ է ներկայացնում սեյսմիկ տեսնակյունից:

Այս տարածաշրջանում դիտարկվում է քաղցկեղածին և սիրտ-անոթային հիվանդությունների բարձր մակարդակ: Չի կատարվել և չի կատարվում համայնքի բնակիչների առողջության գնահատում՝ պայմանավորված շրջակա միջավայրի աղտոտման հետ:

Համայնքի բնակիչների փոխհատուցում ստանալու պահանջին, առողջական բողոքներին պատկան մարմինները չեն արձագանքում: Պոչամբարի հետագա աշխատանքի և ռեկուլտիվացման խնդիրների հետ կապված դեռևս ոչինչ չի ձեռնարկվում: Անհրաժեշտություն կա իրականացնել մարդկանց առողջության և շրջակա միջավայրի խորացված գնահատում և փոխհատուցել քաղաքացիներին իրենց կրած տնտեսական և առողջական վնասների դիմաց, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմակերպել բնակչության տարհանումը:

Ներկայացնում մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվել են այս տարիների ընթացքում.

- Պոչամբարում չի գործում ջրի շրջանառու համակարգ:
- 2015թ. գյուղի արոտավայրերն անօրինական կերպով համայնքապետարանի կողմից տրամադրվում էին «Ախթալայի ԼՀԿ»-ին քանդելու և հողը պոչամբարի դամբաները կառուցելու նպատակով, որի արդյունքում խախտվում էր գյուղի լանդշաֆտը, վնաս էր հասցվում արոտավայրերին, անընդհատ բարձրացվում էր պոչամբարի տարողունակությունը: Եղել են նաև մասնավոր հողատարածքների քանդման դեպքեր:
- 2015 թվականին Մեծ Այրումի համայնքապետը և համայնքի ավագանին, դեմ գնալով համայնքի բնակիչների կամքին, հողի մոտ գյուղատնտեսական նշանակության 13 000 հա հողի կատեգորիան փոխեց հանքարդյունաբերականի, որպեսզի գյուղում կառուցվի նոր պոչամբար:
- Մեծ Այրումի պոչամբարի մոտ գտնվող և տասնամյակներով գյուղը խմելու ջրով սնող բնական աղբյուրը մնաց պոչամբարի տակ համայնքապետարանի թույլտվությամբ:
- Պոչամբարի ջրերը ժամանակ առ ժամանակ հոսում և խառնվում են Դեբեդ գետի ջրերին, որոնցով Այրումի և այլ շրջակա գյուղերի բնակիչները ոռոգում են իրենց այգիները: Ըստ Այրումիցների և Շնող գյուղի բնակիչների՝ այդ ջրերով ոռոգված այգիները չորացել և չորանում են:
- 2014 թվականին քիմիկոս Մեյրան Մինասյանը Մեծ Այրումի դեղձը ենթարկեց փորձաքննության և պարզեց, որ նրանց մեջ ծանր մետաղների առկայությունը գերազանցում է նորման բազմաթիվ անգամներ:
- 2015 թվականին Հայաստանի Ամերիկյան համալսարանը Ախթալա քաղաքի երեխաների արյան փորձաքննություն իրականացրեց և պարզեց, որ ծանր մետաղները երեխաների արյան մեջ գերազանցում են նորման բազմաթիվ անգամներ:
- 2018-2019 թվականներին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի, «Հայ կանայք հանուն

առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի և քիմիական անվտանգության հարցերով զբաղվող չեխական «ԱՐՆԻԿԱ» կազմակերպության համագործակցությամբ իրականացվել են հետազոտություններ, որոնք հիմնավորում են Մեծ Այրումում, Ախթալա համայնքի և Ալավերդի համայնքի մի շարք բնակավայրերում հանքարդյունաբերական աղտոտիչների առկայությունը և դրանց տարածումը հողերում, միրգ-բանջարեղենում և մարդու օրգանիզմում:

- Մեծ Այրում գյուղի գյուղատնտեսական ապրանքները մոտակա շուկաներում չեն վաճառվում, քաղաքացիները խուսափում են գնել այն՝ կասկածելով, որ այդ ապրանքների մեջ առկա են ծանր մետաղներ և այլ թունավոր նյութեր, ինչի արդյունքում գյուղատնտեսությունն այդ գյուղերում անկում է ապրում:
- Գյուղացիներն արդեն բավական երկար տարիներ բողոքում են առողջական խնդիրներից, մասնավորապես, գլխացավերից, թունավորումներից, սիրտ-անոթային հիվանդություններից և ճնշման տատանումներից, ինչը կապում են պոչամբարի առկայության հետ:
- Պոչամբարը տարիներ շարունակ չի ցանկապատվել, բացակայում են անվտանգության նորմերը, ընտանի կենդանիները արածում են պոչամբարի շուրջ, երեխաները խաղում են, եղել են դեպքեր, երբ ընտանի կենդանիները խորտակվել են պոչամբարում:
- Պոչամբարի մակարդակն արդեն իսկ ավելի բարձր է Մեծ Այրում-Ճոճկան միջհամայնքային ճանապարհից և վտանգավոր է նաև սեյսմիկ կայունության տեսանկյունից:
- Արտակարգ իրավիճակների նախարարությունը չի տիրապետում «Նահատակ» պոչամբարի անվտանգության խնդիրների մասին տեղեկատվությանը:
- ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ՀՀ առողջապահության նախարարությունն անգործություն են դրսևորել և պատշաճ ձևով չեն արձագանքել խնդիրներին:

Անհատական դեպք

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում բնակվում է քաղաքացի Հարություն Դանիելյանը՝ ծնված 1983թ.: Հարություն Դանիելյանի ընտանիքը բաղկացած է կնոջից և երեք անչափահաս երեխաներից՝ երկու աղջիկ և մեկ տղա, 14, 8 և 4 տարեկան: Հարություն Դանիելյանը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղից տեղահանված ընտանիքի գավակ է: Ընտանիքն ունեցել է տեղահանության ժամանակ 4 անչափահաս երեխա և կորցրել է ամբողջ սեփականությունը: Մեծ Այրում գյուղում ընտանիքը բնակություն հաստատելով՝ տարիներ շարունակ պայքարել է իր սահմանափակ կենցաղը ստեղծելու համար: Ընտանիք կազմելով՝ Հարություն Դանիելյանը 2007 թվականին ձեռք է բերել տուն Մեծ Այրում գյուղում՝ «Նահատակ» պոչամբարի հարևանությամբ՝ աշխատելով այդ տարիներին որպես պայմանագրային զինվորական: Տուն գնելիս Հարություն Դանիելյանը տեղյակ չի եղել պոչամբարի՝ առողջության և գյուղատնտեսության համար բարձր ռիսկերի մասին և դրա հետագա վերաշահագործման մասին: Տունը գնելուց հետո «Ախթալայի ԼՀԿ»-ն սկսել է պոչամբարի վերաշահագործումը, որը լցվելով նորանոր դժվարություններ է առաջացրել Մեծ Այրում գյուղի բնակիչների համար:

Հարություն Դանիելյանի տունը գտնվում է պոչամբարի տարածքից 50 մետր հեռավորության վրա, այդ իսկ պատճառով իրենց կյանքը այդ տանը, այդ տարածքում դարձել է անհնար: Շարունակական առողջական խնդիրները մտահոգում են Դանիելյանների ընտանիքին, ինչպես նաև անհնար է այդ տարածքում զբաղվել գյուղատնտեսությամբ և մշակել տնամերձ հողամասը, քանզի այն ներծծված է ծանր մետաղներով:

Առողջական խնդիրներ.

Տարիներ շարունակ Դանիելյաններին ուղեկցում են առողջական խնդիրները.

- 2013-2014 թվականներին որդին՝ Սյոմա Դանիելյանը, տառապել է աղիքային հիվանդությամբ, ինչն այդ ժամանակվա բուժող բժիշկների բնորոշմամբ պայմանավորված էր օդից և ջրից անցած վարակով:
- Փոքր դուստրը՝ Լիլիթը, 8 ամիս չէր աճում: Բժիշկները նշում էին, որ երեխան կարող է չապրել, քանզի ռախիտ հիվանդությամբ է տառապում: Ծնողները չեն հանձնվել և բուժում են իրականացրել, որի արդյունքում հիմա երեխան գտնվում է նորմալ վիճակում ընտանիքի կողմից տարիներ շարունակ ծախսեր կատարելու շնորհիվ:
- Հարություն Դանիելյանի հայրը՝ Սյոմա Դանիելյանը, 67 տարեկան է, 2018 թվականին ինֆարկտ է ստացել և սիրտը ստենդավորել են: Սյոմա Դանիելյանը երբեք չի ծխել, ալկոհոլային խմիչքներ օգտագործում է չափազանց քիչ քանակով, միայն տոների ժամանակ, բնավորությամբ հանգիստ անձնավորություն:
- Հարություն Դանիելյանի մայրը 57 տարեկան է, տառապում է սրտային հիվանդությամբ:
- Հարություն Դանիելյանի կինը և երեխաները մշտապես ունեն գլխացավեր և խրոնիկ հոգնածություն:
- Իհայտ են գալիս ալերգիկ դրսևորումներ, հատկապես Հարություն Դանիելյանի որդու աչքերը հաճախ կարմրում են:

Դանիելյանների սոցիալական առկա վիճակը թույլ չի տալիս զբաղվել ընտանիքի անդամների առողջական խնդիրներով, մասնավորապես, խորքային հետազոտություններ իրականացնելու համար:

Ընտանիքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

- Ընտանիքի անդամները չեն աշխատում, գործազուրկ են:
- Ընտանիքը գտնվում է սոցիալ-տնտեսական դժվար իրավիճակում, նպաստառու է:
- Հարություն Դանիելյանի հայրը երկրորդ կարգի հաշմանդամ է
- Տնամերձ հողամասը պիտանի չէ գյուղատնտեսական նպատակով օգտագործման համար աղտոտվածության պատճառով:

Ըստ Դանիելյանի՝ ինքը նախկինում մի քանի անգամ դիմել է «Ախթալայի ԼՀԿ» իր մտահոգությունները հայտնելու համար, սակայն իրեն չեն ցանկացել լսել:

Ընտանիքը պահանջում է .

- Ստանալ «Ախթալայի ԼՀԿ»-ից փոխհատուցում բնակության և մշակման նպատակով ոչ պիտանի դարձած բնակարանի և տնամերձ հողամասի համար,

որպեսզի ընտանիքը կարողանա այլ վայրում գնել բնակարան և տեղափոխվել աղտոտված տարածքից հեռու:

- Իրականացնել իրենց ընտանիքի անդամների առողջության գնահատում և խորքային բուժզննում: Հիվանդությունների առկայության պարագայում ապահովել ընտանիքի անդամների անվճար լիարժեք բուժումը:
- Ստանալ փոխհատուցում առողջությանը պատճառված վնասների համար:
- Պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Հարցեր հայտատուին

Հարց

Լևոն Գալստյան.

- Պոչամբարի պատվարի հետնամասով անցնում է ոռոգման ջրի խողովակ: Այդ հարցն ինչ-որ կերպ քննարկվե՞լ է: Եթե վթար տեղի ունենա խողովակում, այդ վթարի հետևանքով ի՞նչ կարող է տեղի ունենալ, և արդյո՞ք գնահատված է ռիսկը:

Պատասխան

Օլեգ Դուլգարյան.

- Որևէ կերպ չի քննարկվել: Քննարկվել է այն հարցը, թե պոչամբարը փլվի, ինչ վտանգներ կարող է ներկայացնել: Հողատարածքում պոչամբարից ներքև ճոճկան գյուղի բնակչությունն ունի տարբեր հողամասեր: Խնդիրը դրա հետ էին կապում, ինչպես նաև միջպետական ճանապարհի և երկաթգծի հետ, ինչը կարող է ազգային անվտանգության խնդիր առաջացնել, եթե փլվի: Բայց ձեր ասածը որևէ կերպ դեռևս չի քննարկվել:

Հարց

Լևոն Գալստյան.

- Ուսումնասիրություն է կատարվել տարածաշրջանում՝ Ախթալայից մինչև Մեծ Այրում, Նեղոց, Քարկոպ: Ունենք հողի աղտոտում, որոշ տեղերում ջրի, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների: Ունենք գիտական տվյալները, բայց կա՞ն այլ տվյալներ, որ արվել են ընկերության կամ պետական մարմինների կողմից նույն խնդիրների վերաբերյալ: Արդյո՞ք ընկերության և պետության կողմից կատարվում է ջրի մշտական մոնիթորինգ, որպեսզի կարողանանք պարզել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատի տված տեղեկատվության հավաստիությունը:

Պատասխան

Օլեգ Դուլգարյան.

– Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետազոտությունը կարելի է համարել պետական, որովհետև այն տեղի է ունեցել պետության և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Այդ հետազոտություններն իրականացնելուց հետո նախկին իշխանությունները բոլոր ձևերով թույլ չեն տվել, որ դա հանրայնացվի: Ես կարող եմ համարել պետական, և պետությունը դա որևէ կերպ չի ժխտում: Մենք ունենք դեպք, երբ մի գիտնական Մեծ Այրումից կեռաս կերավ ու թունավորվեց: Ամերիկյան համալսարանի, «ԱՐՆԻԿԱ»-ի հետազոտությունները կան: Սեյրան Մինասյանն անհատական տարբեր հետազոտություններ է իրականացրել

դեռևս 2015 թ. Այրումի դեղձի վերաբերյալ: Բայց կրկին անմիջականորեն պետության կողմից որևէ միջոցառում չի իրականացվել:

Հարց

Ռոզա Ջուլիակյան.

- Ձեր կողմից ներկայացվածով ուղղակիորեն մեղադրվում է կոմբինատն իր ոչ բարեխիղճ աշխատանքի համար: Համայնքն արդյո՞ք պատրաստ է իրականացնել համապատասխան հետազոտություններ, թե՞ Դուք ակնկալում եք, որ հետազոտություններ կատարելու այդ պատասխանատվությունը պետք է կրի Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը և այն կատարի իր միջոցներով:

Պատասխան

Օլեգ Դուլգարյան.

- Կարծում եմ, որ ԼՀԿ-ն այդ առումով անելիք ունի, սակայն դա ինքնուրույն գործունեություն չպետք է լինի, այլ պետության հետ համագործակցությամբ: Այստեղ մեղավոր են ոչ միայն «Ախթալայի ԼՀԿ»-ն, այլ ՏԻՄ մարմինը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը: Առողջապահության նախարարության կազմում գոյություն ունի հատուկ ՊՈԱԿ, որը կոչված է իրականացնելու այդպիսի գործունեություն, պետք է իրականացնի շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով հիվանդություններ ձեռք բերած, տուժած քաղաքացիների առողջապահական հետազոտություններ: Մենք պետական համակարգում ունենք մարմիններ, որոնք ստանում են աշխատավարձ, ունենք ՏԻՄ, ունենք բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին: Դրանք՝ բոլորը, պատասխանատու են, սակայն թե ում հաշվին պետք է դա իրականացվի՝ համակարգային խնդիր է: Պետք է իրականացվի պետության և տվյալ ընկերության համագործակցության շրջանակներում, պետության վերահսկողությամբ, այդ թվում ընկերության ֆինանսական միջոցների հաշվին:

3. Տուժողների և վկաների վկայությունները.

Հարություն Դանիելյան՝ Մեծ Այրում գյուղի բնակիչ, տուժող.

Հարություն Դանիելյան.

- Իմ խնդիրն այդ տունն է եղել, ես ցանկացել եմ ընտանիքս հանել այդտեղից: Պոչամբարի մոտ եմ ապրում: Մոտ 50 մ հեռավորության վրա: Երեխեքիս գլուխը ցավում է, սրտխառնոց ունեն, սաղ օրը հիվանդանոցում ենք:

Հարցեր տուժողին

Ռոզա Ջուլիակյան.

- Բավարավե՞լ է Ձեր բնակարանի պահանջը, Դուք այլևս այլ պահանջներ չունե՞ք:

Պատասխան

Հարություն Դանիելյան.

- Այո:

Հարց

Ռոզա Ջուլիակյան.

- Ենթադրենք Ձեզ Ախթալայում կամ Շամլուղում տուն տվեցին: Դուք այդ գյուղում այգեգործական հողամաս ունե՞ք:

Պատասխան

Հարություն Դանիելյան.

- Ոչ, վաճառել եմ, որ ընտանիքիս առողջական խնդիրը լուծեմ:

Հարց

Ռոզա Ջուլիակյան.

- Դուք Ձեր հետագա ապրուստի խնդիրը ինչպե՞ս եք պատրաստվում լուծել:

Պատասխան

Հարություն Դանիելյան.

- Առաջակել եմ «Ախթալայի ԼՀԿ»-ում աշխատել:

Սամվել Սիրադեղյան՝ Ճոճկան գյուղի բնակիչ, տուժող.

- «Նահատակ» պոչամբարը սահմանակից է Ճոճկանին, ընդամենը 3 կմ է հեռու: Ջրերը, քամիները պարբերաբար փոշին ու նստվածքը բերում են մեր դաշտերը, աղտոտում մեր բնակավայրը: Մարդիկ բողբոջում են, իրազեկված են, գիտակցում են: Բուժհիմնարկներից ահագանգեր են ստացվում, հիվանդությունները շատացել են նորածինների, տարեց մարդկանց շրջանում, սիրտ-անոթային հիվանդությունները, ալերգիաները հաճախակիացել են: Այդ ամենը կապվում է շրջակա միջավայրի, հատկապես «Նահատակ» պոչամբարի հետ: Մեր հողատարածքները ոռոգվում են Դեբեդ գետի ջրերով, պոմպակայանների միջոցով: Դեբեդ գետն են լցվում պոչամբարի պարզվածքները, նստվածքները, այնտեղից էլ ոռոգում ենք մեր դաշտերը: Մեր ՋՕ-ի ղեկավարությունը ասում է՝ երբ տեսնում ենք ջուր պղտորվել է, պոմպերը անջատում ենք, ջուր չենք տալիս: Բայց ընդհանրապես ոչ մեկի պետքը չէ՝ ինչպիսի ջուր են մեզ մատակարարում: Ինչպես պարզվել է ուսումնասիրությունից, այդ ամենից մեր դաշտերը ծանր մետաղներով են վարակված: Մարդիկ արդեն անհանգստանում են ոչ միայն իրենց առողջության համար, այլ՝ իրենց երեխաների:

Դեբեդ գետից ինքնահոս ես իմ այգին ոռոգում եմ, արդեն 10 տարի գարնան անձրևների, սելավի ժամանակ, երբ աղտոտվում էր գետը, 30-50 սմ հաստությամբ պոչանքները նստած են իմ այգում, ոչ մի բուսականություն չի աճում, մոլախոտ անգամ չկա, նույնիսկ ես ոխակ չեն անում մշակել: Եթե մշակեմ, այդ թունավոր բերքը ո՞ւմ տամ: Արդեն 10 տարի հողամասս չորացել է, չեմ կարողանում օգտվել, եկամուտ ստանալ: Ոչ մի պետական մարմնի չեմ դիմել այս խնդրով, քանի որ գիտեմ ապարդյուն է, ոչ ոք հանձն չի առնի իմ կողքին կանգնել:

Հարց

Նազելի Վարդանյան.

- Ունե՞ք փաստեր, թե այգուց ժամանակին որքան շահույթ եք ստացել և երբվանից եք վնաս կրում:

Պատասխան

Սամվել Սիրադեղյան.

- ՏԻՄ մարմինները 4 տարին մեկ փոխվել են: Հիմա եթե ես դիմեմ համայնքի ղեկավարին, կասեն մեզանից առաջ է եղել: Որևէ մեկը չի կարող պատասխանել:

Կարինե Դանիելյան՝ «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, վկա.

-2016-2017 թթ. հետազոտություններ ենք իրականացրել, նայել ենք 2013-2014-2015 թթ. տվյալները: Նայել ենք նորագոյացություններ, քաղցկեղից մահացություն, արյան համակարգի հիվանդություններ, շնչառական համակարգի հիվանդություններ և շեղումներով ծնունդներ, որով Լոռին առաջին տեղում էր: 5 անգամ քննարկում ենք արել ՄԱԿ-ում, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները գալիս էին ամեն ինչ հերքում՝ որևէ խնդիր չկա: Ուրեմն Լոռին գենետիկորեն է տարբերվում, ծխելուց ա...այլ պատճառաբանություններ բերում: Գրավոր գրեցին, որ համաձայն չեն և քանի որ ՄԱԿ-ը միջպետական կառույց է, ինձ արգելվեց հրապարակել այդ զեկույցը: Միայն թույլ է տրվում գիտական ելույթներ ունենալ, ոչ ավելին: Բայց չեխերի ուսումնասիրություններից հետո, երբ հաստատվեց և շատ ավելի ռիսկային գնահատվեց իրավիճակը Լոռիում, մենք՝ այդ առիթով կազմակերպված համաժողովի մասնակիցներս միասին նամակ ուղարկեցինք Կառավարություն, որ անմաքսիմալ պետք է ստեղծել համապատասխան հանձնաժողով, ուսումնասիրել իրավիճակը, տեսնել ինչ կարելի է անել: Պատասխանը ստացել ենք, որտեղ ասուվմ է, որ Առողջապահության նախարարությունը հիմա նոր մշակում է մեթոդոլոգիա, նոր ուսումնասիրում են, թե շրջակա միջավայրն ինչպես է ազդում առողջության վրա: Ասում են կա խնդիր, բայց շատ աղեկվատ պետք է ուսումնասիրել: Մենք պետք է պատասխան ուղարկենք, որ ցանկանում ենք մասնակցել ամբողջ գործընթացին, ոչ միայն արդյունքները քննարկել:

Արձագանք

Օլեգ Դուլգարյան.

- Շատ կարևոր է հասկանալ. երկիրը պետք է ունենա ռազմավարություն: Միգուցե պետք է հուշել, հանդես գալ առաջարկություններով: Այդ գրության մեջ Կառավարությունը նշում է, որ, ընդառաջ գնալով հանրության պահանջներին, որոշել է Համաշխարհային բանկի հետ միասին երկու համայնքներում իրականացնել առողջության գնահատում: Սակայն դեռևս բացակայում են ժամկետները: Այդ համայնքներից, ըստ տրամաբանության, մեկը պետք է լինի Լոռու, մյուսը՝ Սյունիքի մարզում: Ամենաառաջնայինը մեզ մոտ Ախթալա համայնքի ընդգրկումն է այդ հետազոտության ծրագրի մեջ: Ինչպես նաև ընդգրկվելու է երկու ոչ հանքարդյունաբերական համայնք: Պետք է ընտրվեն այնպիսի համայնքներ, որտեղ ոչ միայն հանքարդյունաբերությունը, այլև արդյունաբերությունը մեծ ծավալներով չի գործել, օրինակ, Վանաձորը ևս ռիսկային քաղաք է այդ առումով, որովհետև նույն հիվանդությունները կարող են նաև այնտեղ հայտնաբերվել:

Մենք խոսում ենք տարածաշրջանում տուրիզմի զարգացման մասին, այդ թվում՝ արդյունաբերական և հանքարդյունաբերական համայնքներում: Տարածաշրջանում շատ մարդիկ աշխատում են և պայքարում են, որպեսզի կոտրեն այն կարծրատիպը, որ չի կարելի տուրիզմով զբաղվել այն համայնքներում, որտեղ աղտոտվածությունը բարձ է:

Մի խնդիր կա: Պայթուցիկների ձորի պոչամբարը: Ժամանակին այդ պոչամբարից հին կուտակված թափոնները տեղափոխել են և թափել են ձորի բերանին, մեծ սար է դարձել, ամեն անձրևից հետո շարունակվում է շրջակա միջավայրին վնաս հասցնել, բնականաբար, նաև մարդկանց առողջությանը: Կարծում

եմ, դա էլ շուտափույթ լուծման կարիք ունի: Այդ տարածքը պետք է մաքրվի և վերականգնվի:

Կարինե Դանիելյան.

- Դուք ասում եք, որ կարող եք կոտրել կարծրատիպ, բոլոր դեպքերում միջազգային գիտական գրականություն կա, այդ բոլոր տվյալները դուրս են գալիս միջազգային գրականություն: Երևանի պետական համալսարանի գենետիկայի ամբիոնը ուսումնասիրել է Սևանի ձկները՝ հայտնաբերել ակտիվ մուտոգենեզ ձկների մոտ: Իսկ Ագրարային համալսարանն ուսումնասիրել է ջրում ծանր մետաղների գոյությունը, պարզել, որ բավական բարձր է: Դուրս է գալիս որպեսզի աշխարհը հասկանա խնդիրը պիտի բոլոր ճանապարհները փակենք:

4. Պատասխանողների ներկայացուցիչների փաստարկները և իրավական դիրքորոշումը.

Արտակ Դեմիրճյան՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ.

- Խնդիրը շուրջ 200 տարի է՝ կա: Լոռին շուրջ 200 տարի արդյունաբերության զարգացում է ունեցել: Խորհրդային տարիներին տասնապատիկ ավելի շատ ազդեցություն կար, որովհետև արդյունահանումը մեծ ծավալի էր: Ալավերդիի պղնձաձուլարանը տարեկան 40-45 հազար տոննա չգտված պղինձ է տվել: Պետք է մաքսիմալ մոտենանք եվրոպական չափանիշներին՝ աղտոտողը վճարում է, որպեսզի 10-ն անգամ մտածի և չաղտոտի: Ինչո՞ւ ունենք այս վիճակը, որովհետև ինչ-որ տեղ օրենսդրական շատ մեծ բաց է եղել, որովհետև կոնկրետ պատասխանատվություն չի եղել, նորմալ հետազոտություններ չեն իրականացվել: Գուցե ստուգվել է 5 մետաղ, բայց իրականում 25 մետաղ պետք է ստուգվեր, ընդերքօգտագործող կազմակերպությունների վերահսկման մեխանիզմը լավ չի իրականացվել, պետական մոնիթորինգ չի արվել: Ընդերքօգտագործող-պետություն-համայնք կապը չկա:

Պետք է գտնան, մաքրման կայաններ դնել: Պետք է բացառել հետագայում ցանկացած աղտոտման շարունակություն, և, ընդերքօգտագործման թույլտվություններ տալիս, հստակ պայմաններ դնել: Պետք է ամեն ինչ անենք առողջապահական վիճակը բարելավելու համար:

Հարց

Ռոզա Ջուլիակյան.

- Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը պետք է իր վրա ունենա նաև սոցիալական պարտավորություններ: Դուք՝ որպես մարզային կառավարման ներկայացուցիչ, փորձե՞լ եք պարզել, թե ձեր հանքարդյունահանողներից քանիսի պայմանագրում են նշված սոցիալական պարտավորությունները: Ես գիտեմ, որ «Ախթալայի ԼՀԿ»-ն այն չունի իր ընդերքօգտագործման պայմանագրով: Ինչ որ անում է, անում է իր սրտի կամոք: Դուք փորձե՞լ եք նայել և պահանջել, որ ընդերքօգտագործման պայմանագրերը վերանայեն և պարտադրեն, որ այդ պարտավորությունները ամրագրվեն այդ պայմանագրերում:

Պատասխան

Արտակ Դեմիրճյան.

- Այստեղ մարզպետարանը նման դերակատարություն չունի: Առաջին Ընդերքի մասին օրենսգրքում մարզպետարանի դերակատարությունը կար լիցենզիա տրամադրելու պահով: 2004 թ. հետո մարզպետարանն առհասարակ ոչ մի դերակատարություն չունի: Այդ խնդիրը բազմիցս բարձաձայնել ենք, բայց դա ընկերության ներքին հայեցողությամբ է... Առաջարկություններով հանդես եկել ենք, ուղղակի պայմանագիր կնքողը մենք չենք, առաջարկություններ արել ենք ոչ միայն սոցիալական պարտավորությունների մասով, այլև՝ բնապահպանական, արտանետումների վերաբերյալ...

Հարց

Նազելի Վարդանյան.

- Տեղյա՞կ եք, որ 2018 թ. հոկտեմբերին պետք է դադարեցվեր պոչամբարի շահագործումը և սկսվեր ռեկուլտիվացիան:

Պատասխան

Արտակ Դեմիրչյան.

- Այո, ոչ թե պետք է դադարեցվեր, այլ չոր պոչանքները պետք է տեղադրեին բացահանքի տարածքում: Քննարկումներ գնացին, որ չոր պոչանքներ արտադրվեն, իրենց ՇՄԱԳ-ի մեջ ներկայացված էր, որ մեկ տարվա կտրվածքով իրենք կհասցնեին 100 տոկոս հզորությամբ, թաց պոչեր չեն ունենա: Հիմա հասկանում ենք, որ գործընթացը 90 տոկոս է իրականացվում: Չոր պոչերը տեղափոխում են Շամլուղի հանքավայր, վերառեկուլտիվացնելու:

Հարց

Նազելի Վարդանյան.

- Մարտի 1-ին պետք է ռեկուլտիվացիան ավարտված լինի, բայց դեռ չի էլ սկսվել: Փաստորեն ապօրինի գործունեությամբ է զբաղվում ընկերությունը: Դուք Ձեր մասով այդ խնդիրը բարձրաձայնե՞լ եք:

Պատասխան

Արտակ Դեմիրչյան.

- Մարտի վերաբերյալ ինֆորմացիա չի եղել: Ոչ մի գրություն չենք ստացել: Բայց ամենօրյա ուշադրության կենտրոնում է:

Լրացում

Նազելի Վարդանյան.

- Փորձաքննական եզրակացության մեջ հստակ ժամկետը տրված է:

Հարց

Կարինե Դանիելյան.

- Նախ համաձայն չեմ, որ այս վիճակը 200 տարի է: Այդպես չէ: 200 տարի որոշ գործունեություն եղել է, բայց այս վիճակը չի եղել: Խորհրդային տարիներին էլ է այս վիճակը եղել, բայց ոչ այսպիսի մասշտաբների: Անկախության տարիներին մասշտաբները խիստ մեծացան և՛ գործունեության և՛ աղտոտվածության առումով: Երբևէ մարզպետարանը կառավարությանը դիմե՞լ է, որ վիճակը վատթարանում է, որ էկոլոգիական-առողջապահական խնդիր կա:

Պատասխան

Արտակ Դեմիրչյան. Ես գիտեմ, որ 1960-70-ական տարիներին արդյունաբերության ծավալները տասն անգամ ավելի են եղել: Մեծահասակները կհաստատեն, որ

Ժամանակին Վանաձոր գետում ձուկ չի եղել, այսօր ձկնաշխարհը բավական հարուստ է, իսկ դա ինդիկատորներից մեկն է:

Գագիկ Շահնազարյան` «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ.

- Ձեռնարկությունը շահագործվում է 271 տարի: Խորհրդային տարիներին կոմբինատն աշխատել է մոտ կրկնակի, եռակի անգամ ավելի մեծ ծավալներով, քան այսօր: Երբ մենք անընդհատ փոշու մասին ենք խոսում, ապա պետք է ասենք, որ խոնավության շնորհիվ է, որ այդ փոշին չի թողնում բարձանալ, գնալ ճոճկանի այգիների վրա նստել: Հասկանալի է, որ պոչամբարի կամ ցանկացած արդյունաբերական գործունեության արդյունքում ստացվող պոչերից երկրագնդի վրա որևէ լավ բան չի լինում: Բայց ինձ համար անհասկանալի է, եթե մարդն ապրում է, ինչ-որ մի բան չստեղծվի: Բայց երբ այդ տեխնոլոգիաներն այնքան զարգացած չեն, երբ հնարավորություններն այն աստիճանի չեն, երբ նյութական միջոցները բավարար չեն, մենք պարտավոր ենք առաջ ընթանալ և ստեղծել հնարավորություն, վաղվա օրն ավելի լավ տեխնոլոգիաներ ունենալ: Մենք հասկանում ենք, որ այդ ահագանգերը պետք են, հասկանում ենք, որ մենք ունեցանք որոշակի խնդիր պոչատարներում: Եղել է, որ մեր խողովակաշարերը ջարդվել են: Այս բոլորը հասկանում ենք, գնահատում ենք ռիսկերը: Այդ խնդիրները լուծելու համար պետք է աշխատենք այսօր անել մի բան, վաղն անել ավելի լավ: Դա մեր սկզբունքն է: Մենք բնապահպանական փորձաքննության արդյունքում պետք է 2019 թ. սկսեինք ռեկուլտիվացիան: Հիմա չոր պոչերի արտադրամասում ամբողջապես մեկ տավա արտադրական ցիկլի ընթացքում հասել ենք նրան, որ եղած սարքավորումներով 95-97 տոկոս և ավելիով կարողանում ենք չոր պոչեր արտադրել: Օրական 1200 տոննայից 1150 տոննա չոր պոչեր ենք արտադրում, իսկ 50 տոննան ուղղում ենք պոչամբար, որպեսզի խոնավությունը պահի: Ցանկացած տեխնոլոգիա վթարային իրավիճակ ունի, չէ որ դրանք անխուսափելի են: Եթե անխուսափելի են, ինչ անել` նորից լցնել գետը: Ոչ: Ուրեմն պետք է տեղավորվի պոչամբարում: Մա ասում եմ նրա համար, որ հարցնում են` ինչու ունենք պոչամբար: Այդ պոչամբարների գոյությունը մեզ էլ դուր չի գալիս: Բայց դա անխուսափելի է: Մենք պոչամբար համարյա ոչինչ չենք ուղղում: Այսօր արդեն իսկ նախապատրաստվում է Այրումի կողմից սկսել ամբողջ ռեկուլտիվացիոն աշխատանքները: Մենք ծրագիր ենք գրում, հուսով ենք` կանցնի:

Հարց

Նազելի Վարդանյան.

- Ինչո՞ւ եք ապօրինի շահագործում պոչամբարը:

Պատասխան

Գագիկ Շահնազարյան.

- Ինձ մոտ եղած փորձաքննական եզրակացության պատճենը կտրամադրեմ, Դուք կտեսնեք, որ մենք չունենք որևէ արգելք այդ իմաստով:

Տարեկան 60 միլիոն դրամ հատկացնում ենք Ախթալա համայնքին:

Հարց

Նազելի Վարդանյան.

- Տեխնիկական փորձաքննությունը ե՞րբ է արվել:

Պատասխան

Գագիկ Շահնազարյան.

- Նախորդ տարի:

Հարց

Ռոզա Ջուլիակյան.

- Դուք նշում եք, որ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն անցել են: Մենք տեսանք մի քանի օր առաջ, որ նստվածքները բերնեբերան լցված են, և ամբողջ այդ հոսքը թափվում է ներքև անձրևի հետ: Միթե այդ վիճակը ձեզ գոհացնում է: Այն ավելորդ քանակությունը, որը դուք ուղղում եք «Նահատակ» պոչամբար, սահում է պատնեշի այս մյուս կողմից:

Պատասխան

Գագիկ Շահնազարյան.

- Այդպես չէ:

Հարց

Լևոն Գալստյան.

- Ձեր նախագծում գրված է, որ պետք է գործի ջրի փակ շրջանառու համակարգ և ջուրը պետք է վերադարձնել արտադրություն: Ինչո՞ւ այդ համակարգը չի գործում: Դուք համարո՞ւմ եք, որ կատարել եք մի խախտում, որը ձեր նախագծերով թույլտրված չի եղել:

Պատասխան

Գագիկ Շահնազարյան.

- Դուք երևի տեղյակ չեք, որ պոչամբարի գործելաձևը ոչ թե շրջանառու համակարգով է, այլ՝ արտանետումների համակարգով: Եթե անհրաժեշտ լինի կներկայացնենք փաստաթուղթը:

Հարց

Լևոն Գալստյան.

- Միջազգային փորձագետների ուսումնասիրությունը, որն արվել է նախանցյալ տարի ձեր պոչամբարի վերաբերյալ, այնտեղ հստակ գրված է, որ փաստաթղթերով պոչամբարը պետք է գործի ջրի փակ շրջանառու համակարգով: Դա նախագծային պայմանն է եղել:

Պատասխան

Գագիկ Շահնազարյան.

- Գրվածը չի նշանակում ճշմարտություն: Ես Ձեզ կարող եմ ներկայացնել այն փաստաթուղթը, որտեղ ասված է, որ պետք է գործի ...մեզ տվել են փաստաթղթեր, որ տեխնիկական շահագործման պայմաններում հնարավոր է...

Հարց

Լևոն Գալստյան.

- Եթե սխալ է գրված, ասեք, որ սխալ են եղել: Պոչամբարի պատվարն ամբողջովին ենթարարված է էռոզիայի, վթարային վիճակում է գտնվում: Այս վիճակում այդ պոչամբարը ցանկացած օր կամ ժամ կարող է պոկվել: Դուք՝ որպես կազմակերպություն, հասկանո՞ւմ եք այդ վտանգը, արդյո՞ք իրականացնում եք ամենօրյա մոնիթորինգ, թե պոչամբարի պատվարը քանի մմ տեղաշարժվեց և որ ուղղությամբ:

Պատասխան

Գագիկ Շահնագարյան

- Ինչ վերաբերում է մոնիթորինգին, ապա համապատասխան ինժեներական կառույցների կողմից դա արվում է: Պոչամբարի պատվարի ներքևի հատվածի վրա վերջին աշխատանքները մենք իրականացրել ենք մոտ 20 օր առաջ: Մենք ամեն շաբաթ չափում ենք և պոչամբարի դիրքը, և տեղաշարժը: Մեր չափումների արդյունքները կարող ենք ներկայացնել:

Հարց

Օլեգ Դուլգարյան.

- Համայնքին տրվում է սոցիալական աջակցություն: Համաձայն եք, որ նման գումարները պետք է համայնքի շրջակա միջավայրի և առողջապահության վրա ծախսվի: Որքան ես տեղյակ եմ, Ընկերությունն այդ նպատակներով է տրամադրում:

Պատասխան

Գագիկ Շահնագարյան.

- Ես չգիտեմ այդ գումարի 100 տոկոսը, թե որքանը պետք է ուղղվի առողջապահությանը: Մակայն եթե համայնքը դիմում է որևէ խնդրով, չի եղել մի դեպք, որ նման խնդիր չքննարկվի և լուծում չստանա: Բայց կարծում եմ, որ համայնքը դա պետք է բնակիչների հետ քննարկի:

Հարց

Նազելի Վարդանյան.

- Արդյո՞ք ընկերությունը պատրաստ է ազդակիր համայնքների բնակիչների կյանքի և առողջության ապահովագրություն իրականացնել:

Պատասխան

Գագիկ Շահնագարյան.

- Ինչ վերաբերում է առողջության ապահովագրությանը կամ առհասարակ սոցիալական խնդիրների լուծմանը... Որպես այդպիսին, մենք պետք է հիմնավոր ներկայացնենք մեր ծախսերի շրջանակը:

Առաջարկ

Նազելի Վարդանյան.

- Դուք համայնքին ամեն տարի գումար եք փոխանցում: Դրա մի մասը կարող եք յուրաքանչյուր անձի համար հասցեական ծախսել: Յուրաքանչյուր անձ ապահովված կլինի, որ եթե հիվանդանում է, գոնե կարող է անվճար բուժօգնություն ստանալ:

Պատասխան

Գագիկ Շահնագարյան.

- Մենք պատրաստ ենք, թե չէ, ուրիշ խնդիր է: Բայց դա կարող ենք անել, թե չէ՝ ուրիշ խնդիր է: Դրանք տարբեր բաներ են: Դա օրենսդրական դաշտում պետք է կարգավորվի, առանց դրա չի լինի:

Արձագանք

Լևոն Գալստյան.

- Մի բան հավելեմ, այս ուսումնասիրության մեջ գրված է, որ անգամ ռեկուլտիվացիա իրականացնելուց հետո պոչամբարի տարածքը դեռևս վտանգներ է ներկայացնելու:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

- 2015թ «Ախթալայի ԼՀԿ»-ում ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության ստուգումներով հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված **10,083 մլն դրամի վնաս**, որից 5.04 մլն դրամը՝ ջրային ռեսուրսների աղտոտման համար, 4,93 մլն դրամը՝ մթնոլորտային օդի աղտոտման համար: ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջների խախտման համար պատասխանատու պաշտոնատար անձը ենթարկվել է 300,0 հազար դրամ վարչական տուգանքի: Տրվել են ջրի շրջանառու համակարգի պարտադիր ներդրման վերաբերյալ, սեղմ ժամկետում շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման բնապահպանական միջոցառումների ծրագրի մշակման հանձնարարականներ, սակայն առ այսօր ջրի շրջանառու համակարգը չի ներդրվել:
- 2018թ. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուգումների արդյունքում հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված **5,1 մլն դրամ գումարի վնաս**, արձանագրվել են հետևյալ խախտումները՝
ՀՀ ջրային օրենսգրքի 27-րդ և 37-րդ հոդվածների հետևյալ պահանջները.
 - իրականացվել է ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրառ
 - սահմանված կարգով չի իրականացվել ջրառի հաշվառում
 - չի մշակվել արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների մոնիթորինգ, բարելավող և աղտոտման նվազեցման, կանխման միջոցառումներ
 - չի մշակվել և իրականացվել ջրակորուստների կրճատման և նորմավորման ջրաքանակների արդյունավետ օգտագործման միջոցառումների ծրագիր
 - 2017թ. վթարի հետևանքով արտադրական հոսքաջրերն աղտոտել են 200մ² հողային տարածք, ինչը ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պահանջով մաքրվել է:
Նշված խախտումների համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է վարչական պատասխանատվություն 200.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հաշվարկվել է ջրային ռեսուրսների աղտոտման և ավել ջրառի համար ջրային ռեսուրսներին հասցված վնաս 3.070.914 ՀՀ դրամի չափով:
Խախտվել են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածների պահանջները.
 - մթնոլորտային օդ է արտանետվել թույլտվությունից ավելի փոշի և առանց թույլտվության ածխածնի, ազոտի օքսիդներ
 - նշված խախտումների համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն 150.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև մթնոլորտային օդին հասցված վնասը կազմում է 1.933.060 ՀՀ դրամ:
Խախտվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13 –րդ հոդվածների պահանջները.

- չեն մշակվել թափոնների անձնագրերը և թափոնների գոյացման և տեղադրման սահմանաքանակները

- նշված խախտումների համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 201.1 հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն 50.000 ՀՀ դրամի չափով:

Խախտվել է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 61-րդ և 69-րդ հոդվածների պահանջները.

- բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին սահմանված կարգով վճարումները չեն կատարվել.

- օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադրման և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարները սահմանված կարգով չեն կատարվել.

- նշված խախտումների համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 60.1-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն 150.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև նախագուշացում՝ խախտումները վերացնելու համար:

Այսպիսով, նշված խախտումների համար կիրառվել է **5.003.974** ՀՀ դրամի գումարի շրջակա միջավայրին վնասի վերականգնման ակտ, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200.000 ՀՀ դրամի չափով վարչական պատասխանատվության ակտ:

- 2017թ. դեկտեմբերի 22-ին Ախթալայի Բարիտ թաղամասի դպրոցի մոտակայքում «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկայից պոչամբար գնացող խյուսատար գծի վրա տեղի է ունեցել վթար և առաջացել խյուսի արտահոսք: <https://hetq.am/hy/article/84528>, <https://www.azatutyun.am/a/28931125.html>
- «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում բնության ու մարդկանց վրա սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև Նահատակ գետի կիրճում գոյություն ունեցող «Նահատակի» պոչամբարի առկայությանը բացասական են գնահատում Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում բնակավայրերի բնակիչները:
- 2019թ. մարտի 15-ին «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի «Նահատակ» պոչամբարի խողովակը վթարվել է, պոչերը լցվել են ճանապարհին /<https://www.ecolur.org/hy/news/mining/--/10957/>
- Ճոճկան և Մեծ Այրում բնակավայրերի միջև գործող պոչամբարը, այս տարիների ընթացքում բազմաթիվ անգամներ դժվարություններ և վտանգ է ստեղծել տեղի բնակիչների համար. մասնավորապես՝ ա/ Ընկերության կողմից պոչամբարի անվտանգության կանոնների չպահպանման պատճառով բազմիցս համայնքի բնակիչներին պատկանող ընտանի կենդանիներն ընկել են պոչամբարի մեջ, բ/համայնքի բնակիչները անընդհատ բողոքել են գլխացավերից, գլխապտույտներից և այլ հիվանդություններից՝ իրենց այդ վիճակը պայմանավորելով պոչամբարի բացասական ազդեցությամբ:

- Համայնքներն իրենց տարածքում պոչամբարի առկայության համար չեն ստացել փոխհատուցում, կամ այդ բնակավայրերում չեն իրականացվել սոցիալական աջակցության ծրագրեր «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից:
- Պոչամբարի մերձակա բնակավայրերի բնակիչները և ՋԼՄ-ները մշտապես ահազանգում են, որ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի պոչանքները տարբեր ճանապարհներով շարունակում են անարգել լցվել Դեբեդ գետը վերացնելով գետի բուսականությունն ու կենդանատեսակները /<https://factor.am/33892.html> /:
- 2017թ. դեկտեմբերի կեսին Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի պոչամբարի վթարի հետևանքով քաղաքի դպրոցի հարակից տարածքում սուր հոտ էր տարածվել, բնակիչների նկարագրությամբ ծառերն ու գետինը պատված էին մոխրագույն զանգվածով, որը հարուստ է ծանր մետաղներով և թունավոր նյութերով /<https://www.shantnews.am/news/view/6672.html/>:
- Մակերևութային և ստորերկրյա ջրերն աղտոտվում են պոչամբարներից բաց թողնվող, կամ արտահոսվող թափոնաջրերով, ինչպես նաև լցակույտերից և հանքուղիներից դեպի բնական միջավայր այլ տիպի արտահոսքերով: Այդ ջրերը հաճախ խառնվում են ոռոգման ջրերին, արդյունքում աղտոտվում են գյուղատնտեսական հողերը, և ծանր մետաղները՝ կապարը, մկնդեղը, ցինկը, օդի, հողի և ջրի, գյուղմթերքի միջոցով անցնում են մարդկանց օրգանիզմ՝ առաջացնելով առողջական լուրջ խնդիրներ՝ ոսկրային դեֆորմացիաներ, օնկոլոգիական հիվանդություններ, բնածին անոմալիաներ, զարգացման շեղումներ, սոմատիկ խրոնիկական և էնդոկրին հիվանդություններ և իմունային համակարգի թուլացմանն ու ընդհանուր հիվանդացության մակարդակի աճ և տարբեր այլ անբուժելի հիվանդություններ:
- Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ախթալա համայնքից վերցրած բոլոր նմուշների 26,7%-ում կապարի պարունակությունը գերազանցում է ԱԹԿ-ն (400 մգ/կգ) 294 մգ/կգ միջին երկրաչափականով: Մկնդեղի վերաբերյալ նմուշների 93,6%-ում գերազանցում է ԱԹԿ-ն (12 մգ/կգ) 38 մգ/կգ միջին երկրաչափականով: Մկնդեղի երկրաչափական միջինը 3,1 անգամ գերազանցում էր մկնդեղի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան: Մկնդեղը գերազանցում էր ԱԹԿ-ն հետազոտված նմուշների ավելի քան 93%-ում: Ըստ նույն հետազոտությունների՝ Ախթալայում ապրող երեխաների 84,6%-ի արյան մեջ կապարը գերազանցում է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների՝ ՀՎԿ-ների առաջարկած սահմանային մակարդակը 6,8 մգ/դլ երկրաչափական միջինով (Իրավիճակը Հայաստանի Ախթալա քաղաքում. Հանքարդյունաբերության բնապահպանական եւ առողջապահական հետևանքները, Ռուզաննա Գրիգորյան, ՀԱՀ, 2015թ.):
- Ըստ հետազոտությունների արդյունքների՝ ՀՀ Լոռու մարզը հիվանդացությունների գումարային ցուցանիշներով հանրապետությունում գրավում է առաջին տեղը, ունի 9 բայ:
- Ալավերդի, Ախթալա քաղաքների, Ճոճկան, Քարկոպ և Նեղոց համայնքների տարածքներում աճեցված գյուղմթերքներում սնդիկ հայտնաբերվել է մշակաբույսերի 5 նմուշներում՝ ՍԹԿ նորմերը գերազանցվել են 2,6-11,6

անգամ: Կադմիում հայտնաբերվել է գյուղմթերքի բոլոր նմուշներում, չորս նմուշում գրանցվել են ՍԹԿ-ի գերազանցումներ: Նեղոց գյուղում ստացված ազնվամորու մեջ կադմիումի պարունակությունը 131,9 անգամ գերազանցել է ՍԹԿ-ն: Մնացած գերազանցումները զգալիորեն ավելի ցածր են՝ 1,5-3,3 անգամ: Կապար հայտնաբերվել է բուսական բոլոր նմուշներում, այն գերազանցել է ՍԹԿ-ն: Ալավերդի քաղաքի շուկայից գնված խաղողի և նեխուրի համար արձանագրվել են կապարի ՍԹԿ-ի գերազանցումներ, համապատասխանաբար, 1,2 և 2,1 անգամ: Ցինկի պարունակությունները գյուղմթերքում նույնպես բավականին բարձր են և դեպքերի 94%-ում գերազանցել են ՍԹԿ: Առավելագույն գերազանցումը՝ 35,8 անգամ, գրանցվել է Նեղոց գյուղի ազնվամորու համար: Նիկելի պարունակությունները գյուղմթերքի բոլոր նմուշներում գերազանցել են ՍԹԿ-ն, որի ՍԹԿ-ի ամենաբարձր գերազանցումը՝ 36,8 անգամ, գրանցվել է Նեղոց գյուղի ազնվամորու համար: Գյուղմթերքի հետազոտված 17 նմուշներից 10-ի համար գրանցված են պղնձի պարունակության գերազանցումներ ՍԹԿ-ի նկատմամբ 1,2-2,4 անգամ: Հետազոտության ամենամտահոգիչ եզրակացությունն այն է, որ Ալավերդի քաղաքում և մոտակա գյուղերում (Նեղոց, Քարկոփ, Ճոճկան) ստացվող գյուղմթերքը չի համապատասխանում ՀՀ-ում և արտերկրում գործող սննդամթերքի անվտանգության նորմերին: Վտանգավոր գյուղմթերքը սպառվում է ոչ միայն արտադրողի կողմից, այլև թափանցում է տեղական շուկա, ինչը հանդիսանում է ռիսկի գործոն բնակչության առողջության համար: Ալավերդի, Ախթալա քաղաքների, Ճոճկան, Քարկոպ և Նեղոց համայնքների տնամերձ հանդակների հողերում գրանցել են մի շարք ծանր մետաղների գերնորմատիվ պարունակություններ, այդ թվում վտանգավորության I (As, Pb, Zn) և II (Cu) դասի տարրերի համար [/«Exposure assessment of potentially toxic trace elements via consumption of fruits and vegetables grown under the impact of Alaverdi's mining complex», D.Pipoyan, M.Beglaryan, L.Sireyan, N. Merendino, Human and Ecological Risk Assessment: An International Journal, Volume 25, 2019 - Issue 4/](https://www.tandfonline.com/doi/full/10.1080/10807039.2018.1452604)

- Հետազոտական արդյունքներն ահագանգ չեն հանդիսացել ՀՀ առողջապահության նախարարության համար, որպեսզի պետական մակարդակով անցկացվի համակարգային հետազոտություն (սկրինինգ) հանքարդյունաբերական տարածքներում ապրող բնակիչների հիվանդացությունների վերհանման վերաբերյալ՝ պատճառահետևանքային կապը բացահայտելու ուղղությամբ:
- 2018-2019թթ. կատարված մոնիթորինգների արդյունքում արձանագրվել են ՍԹԿ-ի արժեքների մի քանի տասնյակ անգամ գերազանցումներ հետևյալ գետերի դիտակետերում
 - Դեբեդ գետ՝ Այրումից վերև և Դեբեդ գետի սահմանի մոտ դիտակետեր-մոլիբդեն
 - Ախթալա գետ - ցինկի և պղնձ, կադմիում և մանգան

- Ախթալա գետը, ըստ ծանր մետաղների, ունեն 5-րդ աստիճանի ամենաբարձր աղտոտվածություն [http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/mak_jur-18\(3\).pdf/](http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/mak_jur-18(3).pdf)
- Ըստ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/> կայքի՝
 - Ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարվելիք բազային գումարի չափը կազմում է 190 968 000 դրամ, սակայն 2016 և 2017 թվականներին ընկերությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին չի վճարել հաշվարկված համապատասխանաբար 26 388 000 և 32 466 000 դրամ գումարները (հաշվետվության մեջ նշված է, որ ընկերության կողմից 2016 և 2017թթ-ի համար վճարումը նախատեսվում է կատարել 2018թ-ին, ինչը հնարավոր չէր ճշտել, քանի որ 2018 թվականի հաշվետվությունը բացակայում էր կայքում):
 - 2016-2017թթ. կոմբինատը մշտադիտարկումների համար նախատեսված տարեկան 255 000,0 դրամ գումարները նույնպես չի վճարել:
 - 2016թ-ին կոմբինատը 2 865 562 դրամ հատկացրել է ճոճկան գյուղի ջրագծի վերանորոգման և Ախթալա-Շամլուղ միջհամայնքային ճանապարհի ձյունից մաքրման, իսկ 2017թ-ին՝ 1 247 210 դրամ կրկին նույն ճանապարհի ձյունից մաքրման համար:
 - Ընկերությունը 2016թ. պետբյուջե է վճարել 1208058 դրամ բնապահպանական և 589615 բնօգտագործման վճար, 2017թ-ին համապատասխանաբար՝ 1 059 572 դրամ և 567 449 դրամ վճար: Ընկերության վճարած բնապահպանական վճարներն ուղղվել են հիմնականում փողոցների ասֆալտապատման և աղբահանության միջոցառումների իրականացման համար: Հաշվի առնելով ծանր մետաղներից հողի, ջրի մաքրման համար անհրաժեշտ գումարների ծավալների մեծությունը՝ համայնքները ձեռնպահ են մնացել նման ծրագրերի ներկայացումից:
 - «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի և ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարների միջև 20.10.2012թ. (փոփոխություն՝ 03.06.2015թ.) կնքված հ.ՊՎ-103 ընդերքօգտագործման պայմանագրում խախտվել են ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջները, և պայմանագրով չեն ամրագրվել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած ֆինանսական մասնահանումներ կատարելու վերաբերյալ կետերը: 2018թ-ին Ընկերությունն Ախթալա խոշորացված համայնքի հետ կնքած պայմանագրի շրջանակներում, որպես սոցիալական աջակցություն, ամսական հատկացրել է 5 միլիոն դրամ: Պայմանագրի ժամկետը լրացել է 2019թ.:
 - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Ընդերքի տեսչությունը չեն դադարեցրել Ընկերության գործունեությունը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:
 - Տարեկան 1987.2 հազար խմ քանակով «Նահատակ» պոչամբարի պարզվածքը թափվում է Դեբեդ գետ՝ Փոքր Այրում գյուղի մոտ: Ախթալա գետի երկու գետահատածքներում՝ գետաբերանից 4 կմ հեռավորության

վրա, թափվում են ստորգետնյա հանքի ջրերը (267.6 հազար խմ/տարի) իսկ գետաբերանից 2կմ հեռավորության վրա թափվում են ֆաբրիկայի սարքավորումների հովացման ջրերը (2160,0 հազար խմ/տարի):

- Ախթալա գետի հունի նստվածքների նմուշներն ուսումնասիրված նմուշներից ամենադտոտվածներն են, որտեղ պղնձի խտությունը կազմում է 9500 մգ/կգ, ցինկինը՝ 4000 մգ / կգ, մոլիբդենինը՝ 90 մգ/կգ, մկնդեղինը՝ 55 մգ/կգ: Ադտոտվածության համար պատասխանատուն «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲԸ-ն է ([“Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia”, Author: Martin Bystrianský, Contributing authors: Marek Šír, Jitka Straková, Nikol Krejčová, https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf](https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf)) :
- Դեբեդ գետի ջրերի որակը Մարցի գետից 500մ ներքև դասվում է որպես «միջին» (III դաս), իսկ ք.Այրումից 500մ ներքև և սահմանի մոտ՝ գետի ջրի որակի ընդհանրական V դասի, իսկ Ախթալա գետի ջրերի որակը գետաբերանի մոտ, ըստ ցինկի, պղնձի, կադմիումի, մանգանի, սուլֆատ իոնների և կախված նյութերի, նույնպես V դասի է:
- «Նահատակ» պոչամբարի հարակից տարածքներում հայտնաբերված է ՀՀ Կարմիր գրքում, CITES-ի և Բեռնի Կոնվենցիայի 2-րդ Հավելվածում գրանցված թռչունների 2 տեսակ: Տարածքում հնարավոր է նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված միջերկրածովային կրիայի «Testudo graeca», անդրկովկասյան սաղնձի «Zamenis hohenackeri», սպիտակակուրծք ոգնու (*Erinaceus concolor transcaucasicus*), Շելկովնիկովի կուտորայի (*Neomys schelkovnikovi*) առկայությունը:
- Պոչամբարի կոնսերվացման և ռեկուլտիվացման ծրագիրը /ընդամենը՝ 18.6 հա/ ներառում է պոչամբարից ավելորդ ջրերի հեռացում, դրենաժային համակարգի վերականգնում, պոչամբարի մակերեսի և պատնեշի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացում հիդրոցանքի եղանակով, սպասարկող ճանապարհների փխրեցում, հողաբուսական շերտով ծածկում, խախտված տեղամասերի վերականգնում, հանդակների, փոստրակների լցում: Հիդրոցանքի համար պետք է ընտրվեն տեղանքի համար բնորոշ տարախոտային բուսատեսակները, որոնք ունեն վառ արտահայտված հողամրացնող ունակություն:
 - Ըստ նախագծի՝ պոչամբարի ռեկուլտիվացման առաջին փուլի աշխատանքները պետք է սկսվեին 01.10.2018թ., իսկ ամբողջովին ավարտվեին 01.03.2020թ., սակայն մինչև օրս դրանք չեն սկսվել:
 - «Նահատակ» պոչամբարի տեխնիկական անվտանգության փորձաքննությունը ձևական է եղել, և այս պայմաններում 2018 թվականի նոյեմբերի 23-ին չէր կարող տրվել դրական եզրակացություն: «Նահատակ» պոչամբարի տարածքը գտնվում է սեյսմիկ բարձր վտանգավորության գոտում: Չի իրականացվում տեխնիկական վերահսկողություն: Հայաստանի բոլոր խոշոր պոչամբարները, այդ թվում նաև Նահատակի պոչամբարն, ըստ Համաշխարհային բանկի գեկույցի, կառուցված են վերընթաց բարձրացման նախագծով, ինչը հակասում է սեյսմավտանգ գոտիներում նման պոչամբարների կառուցման միջազգային նորմերին: Երկրաշարժի

ժամանակ նման մեթոդով կառուցված պոչամբարների փլուզման հավանականությունը մեծ է (<http://www.ecolur.org/files/uploads/armeniastategicassessment.pdf>): Համաձայն առկա տվյալների՝ Հայաստանի պոչամբարներն ունեն 2-րդ և 3-րդ դասի՝ բարձր և չափավոր վտանգավորության կարգեր, որոնց վերականգնման համար կպահանջվի 10-30 տարի ([«Первоочередные задачи, связанные с хвостохранилищами Республики Армения», Р.С. Мовсисян*, А.И. Мовсисян*, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2014, https://ecolur.org/files/uploads/pdf/tailingdumps.pdf](https://ecolur.org/files/uploads/pdf/tailingdumps.pdf)):

- «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ն ՀՀ պետական մարմիններին փորձաքննության և թույլտվություններ ստանալու համար ներկայացրել է ոչ պատշաճ, շրջակա միջավայրի վրա ազդեցության իմաստով՝ թերի և կեղծված տեղեկություններ:
- Ընկերության անօրինական գործունեությունների արդյունքում պատճառվել է առանձնապես խոշոր չափերի տնտեսական, էկոլոգիական և մարդկանց առողջության վնասներ՝ արտադրական վտանգավոր քիմիական նյութեր և միացություններ պարունակող հոսքաջրերով աղտոտված ջրային ռեսուրսներ, ծանր մետաղներով աղտոտված հողեր, տեխնիկական անվտանգության և կայունության ցուցանիշները կորցրած վթարային պոչամբար, գյուղատնտեսական նշանակությունը կորցրած՝ հանքարդյունահանման լցակույտերով պատված հարյուրավոր հեկտարներով հողատարածքներ, խախտված և չվերագնազնվող լանդշաֆտ:
- Ընկերության ներկայացուցիչն ընդունում է «Նահատակ» պոչամբարի ազդեցության հետևանքով տուժողի կրած սոցիալական և առողջական վիճակի վատթարացման մասին փաստարկները և հայտարարեց, որ ՀՀ Լոտու մարզի Մեծ Այրում բնակավայրի բնակիչ՝ Հարություն Դանիելյանին կապահովի նոր բնակարանով և աշխատատեղով:

6. Դատարանի իրավական վերլուծությունը

Լսելով դիմումատուի, տուժողների, վկաների, պատասխանողի ներկայացուցիչների առարկությունները, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանն եկավ հետևյալ եզրահանգման.

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված «Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» 14.11.2017թ. հ. ԲՓ-100 փորձաքննական եզրակացության և Ընկերության նախագծի մեջ արձանագրվել են հետևյալ իրավական բացթողումները.

- Հաշվետվության մեջ չեն ներկայացվել բաց հանքում տեղակայվելիք պոչերից, դատարկ ապարներից, լցակույտից հնարավոր թթվային դրենաժի ռիսկի հավանականությունը, բնականաբար, չեն առաջարկվել դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումներ /խախտվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման և փորձաքննության մասին», այսուհետ՝ ՇՄԱԳ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը/:

- Հաշվետվության մեջ չեն ներկայացվել, իսկ եզրակացության մեջ չեն գնահատվել հողերի քիմիական աղտոտման ռիսկերը /խախտվել է ՇՄԱԳ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը/: Թափոնների վտանգավորության աստիճանի, ծավալի, տեղափոխման, պահեստավորման, թաղման և պահպանման պահանջները:
- Նախագծողը չի ներկայացրել որևէ վիճակագրություն՝ կապված տարածաշրջանի էլակետային առողջապահական ցուցանիշների հետ, և չեն գնահատվել Ընկերության գործունեությամբ պայմանավորված ազդակիր բնակավայրերի բնակչության առողջության վիճակի փոփոխության ռիսկերը /խախտվել է ՇՄԱԳ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը/:
- Չի գնահատվել գործունեության անդրսահմանային ազդեցությունը /խախտվել է ՇՄԱԳ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջը, չեն պահպանվել ՀՀ կողմից ստորագրված և 10.09.1997թ. ուժի մեջ մտած «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ԷՍՊՈ-ի կոնվենցիայի դրոշմները (հավելված 1-ին, կետ 4 և 14)/:
- Հողերի մոնիթորինգի բաղադրիչում բացակայում են հողի քիմիական աղտոտվածության մոնիթորինգի միջոցառումները: Ստորերկրյա ջրերի բաղադրության որակական և քանակական անալիզների կատարման մասին չի նշվում ոչինչ, իսկ ռեկուլտիվացիայի որակի գնահատման չափորոշիչներն ընդհանրապես բացակայում են /Խախտվել է ՇՄԱԳ օրենքի հոդված 7-ի 1-ին մասի 3-րդ մասի պահանջները/:
- Բացակայում են մոնիթորինգը կատարող և վերահսկող պատասխանատու մարմինները: Ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսվող միջոցառումները և շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի ծրագիրն արդյունավետ չեն /խախտվել է ՇՄԱԳ մասին օրենքի 19-րդ հոդվածի, 3-րդ մասի 4-րդ կետի պահանջը/:
- Ներկայացված նախագծի համաձայն՝ «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիայի 1-ին փուլը պետք է սկսվեր 2018թ-ի հոկտեմբերից և ավարտվեր 2020թ. մարտի 1-ին: Սակայն, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքները դեռ չեն սկսվել, պոչամբարում են կուտակվում «Ախթալայի ԼՀԿ»-ի պոչանքները, այսինքն, Ընկերությունը խախտել է ՇՄԱԳ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները:

«Շամլուղի ստորգետնյա հանքի վերազինում մինչև 500,0 հազար տոննա/տարի արտադրողականությամբ աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» 17.09.2018թ. հ. ԲՓ-77 փորձաքննական եզրակացության և Ընկերության հաշվետվության մեջ արձանագրվել են հետևյալ իրավական բացթողումները.

- Եզրակացության մեջ դիտարկվել է միայն պոչամբարի ռեկուլտիվացիայի ժամանակ օգտագործվող լցակայանային ապարներից հնարավոր թթվային դրենաժի տեսական հնարավորությունը և փորձագիտական պահանջով

արգելվել է թթվագոյացման պոտենցիալ ունեցող ապարների օգտագործումը՝ առանց հստակեցնելու ապարների կազմը: Այսինքն, այս հարցում չի ցուցաբերվել մասնագիտական մոտեցումն /Խախտվել է ՇՄԱԳ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը/:

- Համակողմանի չի գնահատվել Դեբեդ և Ախթալա գետերի աղտոտման հավանականությունը, որպես աղտոտման ցուցանիշներ ընդունել են նախաձեռնողը ներկայացրել է իր իսկ կողմից արդեն աղտոտված ջրերի քանակական մեծությունները /Խախտվել են ՇՄԱԳ օրենքի 19-րդ հոդվածի 2 մասի պահանջները/:
- Հաշվետվության մեջ չի ներկայացվել որևէ վիճակագրություն՝ կապված տարածաշրջանի էլակետային առողջապահական ցուցանիշների հետ, և չեն գնահատվել Ընկերության գործունեությամբ պայմանավորված ազդակիր բնակավայրերի բնակչության առողջության վիճակի փոփոխության ռիսկերը: Հաշվարկվել է միայն մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը, որն իր մեջ չի ներառել մթնոլորտային օդի, ջրի, հողի, գյուղմթերքի աղտոտվածությունը ծանր մետաղներով և տոքսիկ տարրերով, որոնց սկզբնաղբյուրը Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի համալիրն է /Խախտվել է ՇՄԱԳ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջը/:
- Չի գնահատվել գործունեության անդրսահմանային ազդեցությունը /Խախտվել է ՇՄԱԳ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջը, չեն պահպանվել ՀՀ կողմից ստորագրված և 10.09.1997թ. ուժի մեջ մտած «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ԷՍՊՈ-ի կոնվենցիայի դրայթները (հավելված 1-ի, 4-րդ և 14-րդ կետեր)/:
- Շրջակա միջավայրի մոնիթորինգի ծրագիրը հաշվետվությունում ներկայացված է ձևական, ընդհանուր ձևակերպումներով, չեն նշված նմուշարկման հստակ կետերը, ժամանակացույցը, հողերի մոնիթորինգի բաղադրիչում բացակայում են հողի քիմիական աղտոտվածության մոնիթորինգի միջոցառումները, ստորերկրյա ջրերի բաղադրության որակական և քանակական անալիզների կատարման մասին չի նշվում ոչինչ, ռեկուլտիվացիայի որակի գնահատման չափորոշիչները բացակայում են: Բացակայում են մոնիթորինգը կատարող և վերահսկող պատասխանատու մարմինները: Ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսվող միջոցառումները և շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի ծրագիրն արդյունավետ չեն: Չեն գնահատվել հաշվետվության լիարժեքությունը և հավաստիությունը: Խախտվել է ՇՄԱԳ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջը/:
- Ընկերությունը, չնայած նրան, որ 2019-2020թթ. շահագործել է «Նահատակ» պոչամբարը, սակայն դրա համար չի ունեցել տեխնիկական անվտանգության փորձաքննական եզրակացություն /Խախտվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը/:

ՀՀ առողջապահության նախարարությունը շարունակաբար չի կատարում իր լիազորությունները /Խախտվել է «Հայաստանի

Հանրապետության բնակչության սանիտարահամաճարագային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները/, շարունակաբար ձգձգում է մարդու առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակումն ու դրա հետագա կիրարկումը /Խախտվել է ՀՀ վարչապետի 2017 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջը/

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը փորձաքննական եզրակացության մեջ չի ներառում անդրսահմանային ազդեցություն ունեցող գործունեության փորձաքննական եզրակացության տրամադրման բաղադրիչը /Խախտվում են ՇՄԱԳ օրենքի հոդվածներ 5-ի, 10-ի, 22-ի և 23-ի պահանջները/:
- ՀՀ կառավարությունը պատշաճ չի կատարում ընդերքի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարումը, մասնավորապես, ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող լիարժեք իրավական ակտերի ընդունումը և ընդերքօգտագործման ընթացքում քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը /Խախտվել են Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 15-ի 2-րդ մասի 4 և 14 կետերը/:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ

Բնապահպանական հանրային դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Ախթալայի հանքավայրի «Նահատակ» պոչամբարի շահագործման թույլտվությունների տրամադրման, այն չկոնսերվացնելու և չռեկուլտիվացնելու, դրա նկատմամբ վերահսկողության, մոնիթորինգի հետ կապված օրինախախտումները, որոնք Հայաստանում և տարածաշրջանում հանգեցրել են բնապահպանական աղետի և սոցիալ-տնտեսական ճգնաժամի, վնասել են մարդկանց առողջությունը, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:
2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ առողջապահության նախարարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ իրավապահ մարմիններին, ինչպես նաև «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին:
3. Պատասխանատու ճանաչել նաև պետական մարմինների և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի այն պաշտոնատար անձանց, ովքեր իրենց անգործությամբ, պաշտոնական դիրքի չարաշահմամբ, լիազորությունների գերազանցմամբ, անփույթ գործողություններով նպաստել են Հայաստանի և տարածաշրջանի էկոհամակարգային հավասարակշռության խախտմանը, ջրերի և հողերի աղտոտմանը, անտառների և լանդշաֆտի վերացմանը, մարդկանց իրավունքների խախտմանը ու առողջության վնասմանը, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի խախտմանը:

4. Դիմել ՀՀ Դատախազություն՝ պահանջելով.

- Հարուցել քրեական գործ «Նահատակ» պոչամբարի անօրինական փորձաքննական եզրակացություններ ու թույլտվություններ տրամադրած, ապօրինի շահագործում իրականացրած, փորձաքննական եզրակացության պահանջները չկատարող պաշտոնատար անձանց նկատմամբ և վերականգնել նրանց գործողությունների հետևանքով պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասները:

5. Դիմել ՀՀ կատավարությանը պահանջելով.

- Իրականացնել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում համալիր՝ ֆինանսական, փաստաթղթային, տեխնիկական աուդիտ և հրապարակել արդյունքները:
- Ճանաչել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին պատասխանատու՝ շրջակա միջավայրին, համայնքի ու քաղաքացիների սեփականությանը, մարդկանց առողջությանը պատճառված վնասի համար և պարտավորեցնել վերականգնել վնասված տարածքները, փոխհատուցել բնակիչների առողջությանն ու գույքին պատճառված վնասները:

Հանձնարարել.

ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին.

- 6-ամսյա պարբերականությամբ իրականացնել համալիր ստուգումներ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում և հրապարակել ստուգման արդյունքները:
- Արգելել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին հանքավայրի և «Նահատակ» պոչամբարի շահագործումը՝ փորձաքննական 14.11.2017թ. հ.ԲՓ-100 եզրակացությունում նշված պարտավորությունները չկատարելու և նախագծից շեղվելու պատճառով:
- Պատասխանատվության ենթարկել բնապահպանական խախտումներ թույլ տված պատասխանատու պաշտոնատար անձանց:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը.

- Ուժը կորցրած ճանաչել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին տրված 14.11.2017թ. հ.ԲՓ-100, 17.09.2018թ. հ.ԲՓ-77 փորձաքննական եզրակացությունները՝ դրանցում նշված պարտավորությունները չկատարելու և նախագծային շեղումների հիմքով:
- Իրականացնել մշտադիտարկումներ օդի, ջրի, հողի վիճակի նկատմամբ պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխության, դրենաժային ջրերի առաջացման, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի նկատմամբ՝ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով:
- Իրականացնել հանքավայրի և պոչամբարի անդրսահմանային ազդեցության գնահատում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը

- Վերահսկողություն իրականացնել «Նահատակ» պոչամբարի տեխնիկական անվտանգության ապահովման նպատակով:
- Անվավեր ճանաչել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.11.18թ. տրված հ. 2309.4 փորձաքննական դրական եզրակացությունը:
- Պարտավորեցնել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին՝ ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնելու պոչամբարի կոնսերվացման և ռեկոլտիվացիայի համար նոր նախագծային փաթեթ՝ ներառյալ նոր անվտանգության վկայագիրը, անցկացնելով նոր փորձաքննություն՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն:

ՀՀ առողջապահության նախարարությանը.

- Իրականացնել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարագային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված Շամլուղի հանքի և «Նահատակ» պոչամբարի սանիտարահիգիենիկ փորձաքննությունը:
- Հիմք ընդունել միջազգային /«Արնիկա» չեխական կազմակերպության/ և տեղական /ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի/ մասնագիտական հետազոտական ինստիտուտների կողմից կատարված հետազոտությունները՝ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի հանքավայրին և «Նահատակ» պոչամբարին հարող համայնքների և տարածքների հողերի, ջրերի, գյուղմթերքի և կենսանյութերի վերաբերյալ, և կիրառել անհրաժեշտ միջոցառումներ տեղական բնակչության առողջապահության ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
- Գտնել մեխանիզմներ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի գործունեության ազդեցության գոտու և «Նահատակ» պոչամբարի շրջակա համայնքներում՝ մարդու առողջության վրա բացասական ազդեցության գնահատման ուղղությամբ և արդյունքները հրապարակել: Ուսումնասիրություններ և հետազոտություններ կոորդինացում հաշվի առնել նաև նախկինում կատարած՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և «Արնիկա» չեխական կազմակերպության կատարած հետազոտությունների տվյալները:
- Միջոցներ ձեռնարկել կանխելու հանքավայրի և պոչամբարի բացասական ազդեցությունը շրջակա տարածքում բնակվող անձանց առողջության վրա և ապահովելու մարդկանց առողջության պաշտպանությունը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը.

- Վերանայել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագիրը՝ համապատասխանեցնելով ՀՀ կառավարության 12.03.12. հ.437-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի օրինական ձևին:
- Պարտավորեցնել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին կատարել ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված պարտավորությունները, այդ թվում՝ սոցիալական ծրագրերի իրականացումը և պարտադիր վճարների կանոնավոր վճարումը:
- Ստուգել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից պարտադիր վճարների կատարման ճշտությունը և հաշվետվողականությունը:

7. Պարտավորեցնել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին.

- Պահպանել ՀՀ օրենսդրությունը և միջազգային նորմերը
- Վերականգնել իր գործունեության հետևանքով խախտված տարածքները:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհապաղ դադարեցնել «Նահատակի» պոչամբարի շահագործումը և սկսել պոչամբարի ռեկուլտիվացիայի իրականացումը:
- Փոխհատուցում վճարել բնակիչներին՝ նրանց առողջությանը և գույքին պատճառված վնասների դիմաց:
- Գործունեության ընթացքում բացառել արտադրական և հանքային արտահոսքերը մակերևութային և ստորգետնյա ջրահավաք ավազան, հողերի աղտոտումը ծանր մետաղներով:
- Պահպանել ջրի շրջանառու փակ համակարգի ռեժիմը:
- Կատարել փորձաքննական եզրակացություններով սահմանված պահանջները:
- Կատարել ազդակիր համայնքների բնակիչների կյանքի և առողջության ապահովագրություն:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Ռ.Զուլիսկյան

Լ. Գալստյան